

ՀՀ Շիրակի մարզի <Գյումրու բժշկական կենտրոն> ՓԲԸ-ն

հայտարարում է մրցույթ՝ հետևյալ թափուր պաշտոնների համար.

- **Բուժքույր ակնաբուժական կաբինետի – 1.0**
- **Բժիշկ ակնաբույժ - 1.0**

ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով, բաց մրցույթի կարող է մասնակից լինել ցանկացած անձ, ով կբավարարի ստորև նշված պայմաններին՝

1. Բարձրագույն բժշկական և հետբուհական կրթության առկայություն՝ համապատասխան մասնագիտությամբ:
2. Վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն, եթե մասնագիտացումն ավարտելուց անցել է առավել քան 5 տարի:
3. Բժշկական էթիկայի կանոնների իմացություն:

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող ՀՀ քաղաքացի, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացի, ով ունի կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

Թափուր տեղի հավակնորդների կողմից ներկայացվում է՝

1. դիմում լրացվում է տեղում
2. մեկ լուսանկար 3x4
3. քաղվածք աշխատանքային գրքույկից
4. ինքնակենսագրություն
5. անձնագրի, բարձրագույն և հետբուհական կրթությունը հաստատող դիպլոմի և վերապատրաստման վկայականի պատճեններն ու բնօրինակները
6. արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը
7. նախորդ աշխատավայրից բնութագիր (եթե այդպիսին առկա է)
8. օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո, մրցույթի մասնակիցը կձանոթանա այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը:

Փաստաթղթերն ընդունվում են <<Գյումրու ԲԿ>> ՓԲԸ-ի կադրերի բաժնում, ամեն օր ժամը 09.00-15.00, բացի շաբաթ և կիրակի օրերից (<< Շիրակի մարզ, Գ. Նժդեհի 3/3)

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է՝ 30.10.2019թ.

Մրցույթը տեղի կունենա <<Գյումրու բժշկական կենտրոն>>ՓԲԸ-ում՝

1. Բուժքույր ակնաբուժական կաբինետի-1.0 (01.11.2019թ. ժամը՝ 11:00)
2. Բժիշկ ակնաբույժ-1.0 (04.11.2019թ. ժամը՝ 11:00)

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար, կարող են դիմել <<Գյումրու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի աշխատանքային խմբին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: